

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ԱՎԱՆՂԱՏԵՍԱԿ «ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ»

Ավանդի հիմնական պայմանները

Ավանդատեսակի գործողության ժամկետն է		31.12.17 – 31.01.18թթ. ներառյալ
Ավանդի ներդրման արժույթը		ՀՀ դրամ
Ավանդի ներդրման նվազագույն գումարը		100,000
Ավանդի ներդրման ժամկետը	Տոկոսների վճարման կարգը	Տարեկան տոկոսադրույք
Առավելագույնը 6570 օր (18 տարի)	Ժամկետի վերջում	12%*

*Տարեկան տոկոսադրույքը կարող է վերանայվել Բանկի կողմից յուրաքանչյուր տարի:

Ավանդի առավելագույն գումարը	100,000,000
Ավանդի տեսակը	<ul style="list-style-type: none"> • Ավանդը նախատեսված է ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար, ովքեր հանդիսանում են պետության կողմից <<դրամագլուխ>> ստացած երեխայի ծնողը կամ օրենքով սահմանված կարգով խնամակալը: • Պարտադիր պայման է ավանդը երեխայի անունով ձևակերպելը, իսկ ծնողին կամ խնամակալին՝ որպես երրորդ անձ:

Գումարի համալրման հնարավորություն՝ այո

Մասնակի հետկանչման հնարավորություն՝ այո, սակայն միայն հետևյալ նպատակների համար.

1. Երեխայի ծնողի կամ խնամակալի հիվորեքային վարկի վճարման համար
2. Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված ուսումնական հաստատության վարձավճարի համար /երեխայի ընտանիքի անդամի/
3. Երեխայի ընտանիքի անդամի առողջության ապահովագրության վճարի համար:

Ավանդը կարող է ամբողջությամբ հետկանչվել ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գրավոր պահանջով:

Բոլոր ավանդատուներին տրամադրվում է նվեր՝ ArCa կամ Visa Electron քարտ:

Ինչպես նաև տրամադրվում է նվեր՝ UNIPAY կոմունալ վճարումների միասնական համակարգի քարտ:

Լրացուցիչ տեղեկատվություն

Սակագներ և տուժանքներ

1. Ժամկետային ավանդի հաշվի սպասարկումն իրականացվում է բանկային հաշիվների միջոցով: Եթե հաճախորդը «Յունիբանկ» ԲԲԸ-ում չունի բանկային հաշիվներ, ապա դրամային ժամկետային ավանդ ներդնող ավանդատուի համար Բանկը բացում է բանկային հաշիվ ՀՀ դրամով, իսկ արտարժույթով ժամկետային ավանդ ներդնելու դեպքում բացի արտարժույթային բանկային հաշվից, բացվում է նաև ՀՀ դրամով բանկային հաշիվ:
2. Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ժամկետային ավանդատու ֆիզիկական անձ հաճախորդների հաշիվների համար յուրաքանչյուր հաշվի տարեկան սպասարկման վճարը կազմում է համապատասխանաբար 1000 և 5000 ՀՀ դրամ: Ավանդային հաշվի քաղվածքների և դրանց կրկնօրինակների տրամադրումն առանց ժամկետի սահմանափակման իրականացվում է անվճար: Բանկն իրավասու է միակողմանիորեն փակելու հաճախորդի բանկային հաշվեհամարը, եթե հաճախորդը չի ապահովել Բանկի սակագներով սահմանված սպասարկման վճարները, չնվազող մնացորդը և/կամ 1 տարուց ավել գործարքների չի իրականացրել:
3. Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ ավանդատու հաճախորդների յուրաքանչյուր հաշվի տարեկան սպասարկման վճարը կազմում է համապատասխանաբար 5000 և 50000 ՀՀ դրամ: Ավանդային հաշվի քաղվածքների տրամադրումն առանց ժամկետի սահմանափակման իրականացվում է անվճար: Առանձին տեղեկանքի կամ փաստաթղթի կրկնօրինակների տրամադրման վճարը կազմում է 1000 ՀՀ դրամ, իսկ թղթապահանակի (որոշակի ժամանակաշրջանի փաստաթղթերի) համար՝ 5000 ՀՀ դրամ: Բանկն իրավասու է միակողմանիորեն փակելու հաճախորդի բանկային հաշվեհամարը, եթե հաճախորդը չի ապահովել Բանկի սակագներով սահմանված սպասարկման վճարները, չնվազող մնացորդը և/կամ 1 տարուց ավել գործարքների չի իրականացրել:
4. Ավանդատուի պահանջով ավանդային պայմանագրի վաղաժամկետ խզման դեպքում.
ա/ ավանդի գումարից գանձվում են արդեն իսկ վճարված տոկոսագումարները, եթե ժամկետային ավանդի պայմանագրով սահմանված է տոկոսների ամենամսյա վճարում,
բ/ չի վճարվում ավանդի գումարի նկատմամբ հաշվեգրված տոկոսագումարը, եթե ժամկետային ավանդի պայմանագրով սահմանված է տոկոսների վճարում ժամկետի վերջում:

5. Բանկային ավանդի պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվում է ավանդի պայմանագրով սահմանված դեպքերում և կարգով: Եթե ավանդատուն ավանդի ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել ավանդի գումարը, ապա ըստ պայմանագրում կատարված նշումի՝ կամ երկարաձգվում է պայմանագրի գործողության ժամկետը պայմանագրով սահմանված պայմաններով և երկարաձգման պահին բանկում գործող տոկոսադրույքով, կամ ավանդի գումարը փոխանցվում է ավանդատուի բանկային հաշվին, որի նկատմամբ կիրառվում են բանկային հաշվի համար նախատեսված պայմանները: Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց արտարժույթով բանկային հաշիվների մնացորդների նկատմամբ հաշվարկվում է 0.01%, իսկ ՀՀ դրամով բանկային հաշիվների մնացորդների նկատմամբ՝ 0.1% տարեկան դրույքով՝ բանկում ներդրված փաստացի ժամանակահատվածի համար: Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց արտարժույթով բանկային հաշիվների մնացորդների նկատմամբ հաշվարկվում է 0.01%, իսկ ՀՀ դրամով բանկային հաշիվների մնացորդների նկատմամբ՝ 0.5% տարեկան դրույքով: Բանկն իրավունք ունի փոփոխել բանկային հաշիվների մնացորդների նկատմամբ հաշվարկվող տոկոսադրույքը՝ Յունիբանկ ԲԲԸ Խորհրդի կողմից հաստատված դրույքների և սակագների համաձայն, եթե այլ բան նախատեսված չէ բանկային հաշիվների սպասարկման պայմանագրով:

6. Ավանդատուի հաշվին Ավանդատուի անունով կարող են մուտքագրվել նաև երրորդ անձանցից ստացված դրամական միջոցներ՝ նրա ավանդի հաշվի մասին անհրաժեշտ տվյալների նշումով:

7. Բանկային ավանդի պայմանագրով սահմանված Ավանդի համար տոկոսների չափը ավանդի գործողության ընթացքում Բանկի կողմից ենթակա չէ միակողմանիորեն նվազեցման:

8. Ավանդային հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են Անվանական տոկոսադրույքի հիման վրա:

9. *Տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, այն տոկոսը, որն ավանդատուն կստանա 1000 դրամ ավանդի դիմաց 365-օրյա ժամանակահատվածի համար տարեկան պարզ տոկոսադրույքի կիրառման և տոկոսների կապիտալացման ու վճարման հաճախականության հետևանքով:*

Տեղեկատվություն տոկոսադրույքների վերաբերյալ

1. **Տարեկան պարզ տոկոսադրույք**՝ տարեկան կտրվածքով ավանդային պայմանագրով սահմանված տոկոսադրույք, որի հիման վրա բանկը հաշվարկում է ավանդատուին վճարման ենթակա տոկոսագումարները:

Տվյալ տեսակի ավանդային պայմանագրով վճարվող տոկոսների հաշվարկման բանաձև՝
 $ԱԳ * S / 365 * Օր - 10\%$ (եկամտահարկ), որտեղ՝

ԱԳ - ներդրված ավանդի գումար
 S – տարեկան պարզ տոկոսադրույք
 Օր – ավանդի ներդրման օրերի քանակ՝ հաշվի առնելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի հ. 907 կետ 1, համաձայն որի ավանդի գումարի նկատմամբ տոկոսագումար չի հաշվարկվում ավանդի ներդրման և վերադարձման օրերին:

Օրինակ 1

Ավանդի ներդրման օրերի քանակ- 6570 օր
 Ներդրված ավանդի գումար- 100 000 ՀՀ դրամ
 Տարեկան պարզ տոկոսադրույք- 12%

$$100\ 000 * 12 / 100 / 365 * 6568 - 10\% = 215\ 934.2 \text{ ՀՀ դրամ}$$

2. **Տարեկան տոկոսային եկամտաբերություն (APY)**՝ ցույց է տալիս, թե որքան կկազմի ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունը հաճախորդի կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և ստացված տոկոսագումարները մայր գումարին ավելացնելու (կապիտալացման) արդյունքում:

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+APY)^{D_n/365}}, \text{ որտեղ՝}$$

A - ավանդի սկզբնական գումար,
 n- ավանդի դիմաց դրամական հոսքերի հերթական համար,
 N- ավանդի դիմաց դրամական հոսքերի վերջին համարն է (ներառյալ նաև ավանդի ներդրման պահին դրամական հոսքը), որից հետո ավանդային պայմանագրի ժամկետն համարվում է ավարտված,
 K_n - ավանդի ներդրման պահին և/կամ ավանդի գործողության ընթացքում ներդրված ավանդի և/կամ կապիտալացված տոկոսագումարների, առկայության դեպքում նաև պարտադիր վճարների հոսքեր:
 D_n - այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել ավանդի ներդրման օրից մինչև ավանդի դիմաց կատարվող հերթական (n-րդ) դրամական հոսքերը ներառյալ: Այն դեպքում, երբ ավանդի ներդրման պահին է դրամական հոսքերը, D₁=0 :

APY- տարեկան տոկոսային եկամտաբերությունն է:

- Ենթադրենք առաջարկվում է ավանդատեսակ հետևյալ պայմաններով՝

ա. Ավանդի չափ՝ 100 000 դրամ
 բ. Ավանդի գործողության ժամկետ՝ 1 տարի (365 օր)
 գ. Տարեկան պարզ տոկոսադրույք՝ 12%
 դ. Տոկոսագումարների վճարումները՝ ավանդի գործողության ժամկետի վերջում
 ե. Ավանդատուի կողմից ավանդի ստացման օրը կատարվող պարտադիր վճարներ՝
 Ավանդային հաշվի սպասարկման պարտադիր վճար՝ 1000 դրամ
 Ավանդային պայմանագրի գործողության վերջում վճարվող տոկոսագումարը ստացվում է՝
 $K_2 = 100000 * 0.12 = 12\ 000$ դրամ

n=1 , n=2
D=0 , D=365
K₁=-1000 , K₂=112 000

$$100\ 000 = \frac{-1000}{(1+APY)^{0/365}} + \frac{112\ 000}{(1+APY)^{365/365}}$$

$$101\ 000 = \frac{112\ 000}{(1+APY)^{365/365}}, \text{ որտեղից } APY = 0.1089 * 100\% = 10.89\%$$

3. Ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերության հնարավոր հաշվարկը տոկոսագումարինների վճարումների կանոնավոր հաճախականության դեպքում

$$APY = (1+r/n)^n - 1, \text{ որտեղ }`$$

APY- տարեկան տոկոսային եկամտաբերությունն է

r-տարեկան պարզ տոկոսադրույքն է

n- մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների կապիտալացման հաճախականությունն է

Եթե տոկոսագումարների վճարման հաճախականությունը ժամկետի վերջում է` n = 1 , ապա

$$APY = (1+0.12/1)^1 - 1, \\ APY = 0.12 * 100 = 12\%$$

Ավանդատուի իրավունքների պաշտպանության վերաբերյալ տեղեկատվություն

Հաշվի սպասարկումից կամ ավանդային պայմանագրից բխող վեճերն ու տարաձայնությունները լուծվում են փոխադարձ համաձայնությամբ: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում ավանդատուի իրավունքներն ենթակա են պաշտպանության դատական կարգով, ինչպես նաև ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով: Ավանդատուն կարող է իր իրավունքների պաշտպանությունն իրականացնել անձամբ կամ լիազոր ներկայացուցչի միջոցով:

Բանկն իրավունք չունի ավանդային պայմանագրի կնքումը պայմանավորել արբիտրաժային համաձայնության կնքմամբ:

Այլ տեղեկատվություն

1. Ավանդ ներդնելու համար անհրաժեշտ փաստաթղթերն են`

- անձնագիր կամ անձը հաստատող փաստաթուղթ,
- հանրային ծառայությունների պետ. համարանիշ (սոցիալական քարտ) կամ դրանից հրաժարվելու մասին տեղեկանք:

2. Ժամկետային ավանդի գումարի վրա տոկոսը հաշվեգրվում է ավանդը Բանկ մուտք լինելուն հաջորդ օրվանից մինչև այն ավանդատուին վերադարձնելու կամ Ավանդատուի ավանդային հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը: Տոկոսների հաշվեգրումը իրականացվում է օրական: Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն` ֆինանսական գործառնությունների դիմաց վճարվող տոկոսագումարները իրականացվում են Հայաստանի Հանրապետության դրամով: Եթե ավանդը ներդրված է արտարժույթով, ապա տոկոսագումարները վճարվում են վճարման օրը ՀՀ ԿԲ կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով:

3. Ավանդի գծով հաշվեգրված տոկոսագումարն ենթակա է հարկման եկամտահարկով` ՀՀ օրենսդրությանը համապատասխան, որի դրույքաչափն է 10%: Ավանդատուին վճարվում է արդեն իսկ հարկված տոկոսագումարը:

4. Եթե ավանդի մարման օրը համընկնում է տոն և/կամ հանգստյան օրվա հետ, ապա ավանդի մարման օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը:

5. Բանկում ներդրված ավանդներն երաշխավորվում են ՀՀ օրենսդրությանը համապատասխան` Ֆիզիկական անձանց Ավանդների հատուցումն երաշխավորող հիմնադրամի կողմից: Երաշխավորված ավանդների հաշվարկման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը: Ավանդների երաշխավորող սահմանաչափերը հետևյալն են`

ա) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը տասը միլիոն հայկական դրամ է.

բ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժույթային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը հինգ միլիոն հայկական դրամ է.

գ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժույթային բանկային ավանդներ, և դրամային բանկային ավանդի գումարը հինգ միլիոն հայկական դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը` մինչև տասը միլիոն հայկական դրամով.

դ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժույթային բանկային ավանդներ, և նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է հինգ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային բանկային ավանդը` հինգ միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:

6. Ձևը հետաքրքրող լրացուցիչ այլ տեղեկատվություն կարող եք ստանալ` գանգահարելով թե՛մ հեռախոսակապի

Կենտրոն՝ (+37410) 59 55 55 հեռախոսահամարով:

Թարմացված է՝ 08/01/18 15:37